

Շիրվանզադե Երվանդ Օտյան

(Իմ հիշողություններից)

Տասն ու երեք տարի սրանից առաջ, այն է 1919 թվականին, որոշեցի կատարել երկարատև ճամփորդություն մի շարք անձնական անախորժություններ ցրելու և հոգեպես հանգստանալու նպատակով: Ծրագրել էի անցնել Կ. Պոլիս, այնտեղից Իզմիր և Մարմարայի ու Միջերկրականի Կիլիկիան և Սիրիայի ափերով գնալ երկու-երեք ամսով Եգիպտոս: Այնտեղից մտադիր էի Ջիբրալտարի նեղուցով անցնել Ատլանտյան օվկիանոս:

Ճամփորդությանս վերջնակետն էր Ամերիկան, կամ, ճիշտն ասած, Կալիֆորնիան:

Ինչպես տեսնում եք, ծրագիրս բավական մեծ էր. նրա իրագործումը պահանջում էր առնվազն մեկուկես տարի, ուստի վճռել էի Կ. Պոլսում մնալ ոչ ավելի, քան երկու շաբաթ: Սակայն հայտնի է, որ մարդը նախադրում է, հանգամանքները կարգադրում են: Իմ հանգամանքները, բացի բարոյականից, և նյութականից էին, հետևաբար ստիպված էի Թուրքիայի մայրաքաղաքում նստել մոտ երեք ամիս:

Ես իջևանել էի Թոքթայանի հյուրանոցում, որ իր մաքրությամբ և եվրոպական հարմարություններով (Կ. Պոլսում) ամենայն իրավամբ առաջինն էր համարվում:

Ժամանմանս հետևյալ օրն էր: Նստած էի իմ համարում և կազմում էի այն տեղերի և անձանց անունները, որոնց մտադիր էի այցելել: Երվանդ Օտյանի անունն առաջին շարքումն էր:

Ես կարդացել էի Երվանդ Օտյանի գործերը այն հաճույքով, որով չեմ հիշում, թե կարդացած լինեմ մի ուրիշ արևմտահայ արձակագրի գործերը: Բնական է, որ առաջին այցերիցս մեկը նրան պիտի տայի: Իմ կարծիքով որպես երգիծաբան Երվանդ Օտյանը ավելի ինքնատիպ էր, քան Հակոբ Պարոնյանը, թեև ոչ սրա չափ սրամիտ և հնարագետ, հարկավ նա էլ է եսթարկվել Մոլիերի ազդեցությանը, բայց ոչ անհաշիվ ու անվերապահ: Ինչ վերաբերում է պոլսական ժամանակակից մյուս արձակագիրների համեմատությանը, Երվանդ Օտյանն ունի մի մեծ արժանավորություն — ոճի զարմանալի պարզություն: Մի բան, որից համառորեն խուսափում են շատերը պոլսահայ արձակագիրներից, պարզություն ասված բանը շփոթելով գռեհկության հետ և չզգալով կամ չկամենալով զգալ, օր գեղարվեստական երկի գլխավոր արժանիքը հենց այդ պարզության մեջ է:

— Մտեք, — գոչեցի ես, լսելով սենյակիս դռների բախումը:

Ներս մտավ միջահասակ, երեսն ամբողջապես ածիլված մի մարդ, մոտավորապես հիսուն, հիսունուհինգ տարեկան: Նա ավելի նիհար էր, քան գեր, ավելի վատառողջ, քան կայտառ: Հագնված էր նա վերին աստիճանի անփոյթ, ուզում եմ ասել նրա դերձակը շատ անհոգ էր եղել իր արհեստի վերաբերմամբ և շատ անշնորհք: Առանձնապես տծև էր նրա պահանջվածից ավելի նեղ ու կարճ պանթալոնը իր կուչկուչված ծալքերով ծնկների վրա:

Ես իսկույն ճանաչեցի Երվանդ Օտյանին: Տեսել էի նրա լուսանկարը մեկից ավելի անգամ և ուրիշներից էլ լսել էի նրա արտաքինի նկարագիրը: Բացի այդ, չէ որ եզակի մարդիկ իրանց ներսում ունեն մի խորհրդավոր գոհար, որ վայրկենաբար դուրս է ելնում մի փայլում, երբ նայում ես նրանց աչքերին:

Օտյանի աչքերը կապտագույն էին, ոչ այնքան խոշոր, որքան սուր, հոնքերը սև, քիթը մի քիչ արծվային, այսինքն կեռ:

— Երվանդ Օտյանը, — ասացի ես, ուրախանալով և ընկերաբար գրկելով նրան, նստեցրի բովս, գահավորակի վրա:

Սովորական «բարի գալստից» հետո նա մի գննող հայացք ձգեց աջ ու ձախ և մի տեսակ հոգնած բարիտոնային ձայնով հարցրեց.

— Գո՞հ եք հյուրանոցեն:

— Ավելին պահանջելու կարիք չեմ զգում:

— Ծովը հանգի՞ստ էր, չնեղվեցաք ճամփին:

— Ամենևին:

— Բոսֆոր հավանեցա՞ք:

— Չմայլելի էր:

— Կվախենամ, որ նույնը չպիտի ըստե՞ր Պոլսո համար:

— Ինչո՞ւ:

— Պոլիս գեղեցիկ է ծովեն ու միայն ծովեն: 519

— Բայց...

— Ոչ, ոչ, մի ըստեք: Դրսեն եկող ճամփորդներ չպիտի նավեն իջևան, պիտի հեռվեն նայեն ու երթան...

Եվ իսկույն ևեթ, մեղմիկ ժպտալով, ավելացրեց.

— Սակայն չեմ կամենար ըստի թե դուք ալ նույնը պիտի ընտեք: Մենք չպիտի թույլ տանք, որ դուք մեզնե շուտ բաժնվիք: Արմիստիսեն հետո առաջին ռուսահայ գրողն եք, որ մեզի կայցելեք:

— Շնորհակալ եմ:

— Կծխե՞ք, — հարցրեց նա, գրպանից դուրս բերելով իր ծխախոտատուփը:

— Ահ, ներեցեք, — գոչեցի ես, — ձեզ տեսնելու ուրախությունից մոռացա ձեզ առաջարկել:

— Հաճեցեք իմը փորձել, — հրաժարվեց նա իմ ծխախոտից: — Լավագույն ծխախոտի հայրենիքը Թուրքիան է:

— Ասացեք, ի՞նչ վիճակումն է այժմ Թուրքիան, ուզում եմ ասել՝ Պոլիսը, — հետաքրքրվեցի ես:

— Պոլիսը հիմա կնճանի մեծահարուստ այրուհու մը: Անոր ամուսնուն դիակը տակավին գերեզման չէ մտեր, փեսացուներ եկեր, շրջապատեր են զինքը, կուզեն ամուսնանալ:

— Ձեր խոսքը անշուշտ դաշնակից պետություններին է վերաբերվում:

— Հարկավ:

— Իսկ թո՞ւրքը:

— Անիկա առժամանակ թաքնվեր է, չի երևնար: Բերային վրա դուք կրնաք տեսնել ամեն ազգի մարդիկ, իսկ թուրքերը հատ մը հոս, հատ մը հոն:

— Բայց որտե՞ղ են թաքնվել:

— Կամուրջեն անդին, Ստամբուլին մեջ:

Էյուբեն դուրս չեն ելներ, Բերա չեն բարձրանար, Ղալաթա նույնպես: Կգարշին գյավուրին տեսքեն, անոր լեզվեն, անոր սովորությունն երեն, հաղթողին լրբություններն: Այա Սոֆիա տակավին մզկիթ է, բայց անոր տերն ու տիրականը դը ֆակտո անգլիացին է: Օսմանցին կվախենա, որ շուտով Բյուզանդիոնի գեղեցկուհին նորեն պիտի դառնա քրիստոնեական տաճար:

— Դուք չե՞ք հավատում, որ պիտի դառնա:

— Աս աստվածախնամ երկրին մեջ ալ հավատալու բան մը չմնաց: Ամեն ինչ կրնա պատահիլ: Աս ալ կրնա ըլլա ի որ օր մը հույնը ըստ՝ «Պոլիսն իմն է, դուք հեռացեք»: Դուք կիսնդաք կոր, ես չեմ իսնդար, լուրջ կըսեմ: Էհ, ան ատեն հայն ինչու պիտի լռե: Չէ որ սուլթան Յամիդին տապալողն անիկա եղավ, ինչպես կըսեն զեվզեկները:

— Ինչպե՞ս է այժմ հայերի վիճակը Պոլսում:

Օտյանը հառաչեց և, երեսը մի կողմ դարձնելով, արտասանեց.

— Առժամանակ կոտորածներեն ապահովված ենք:

— Ինչո՞ւ առժամանակ և ոչ առմիշտ:

Օտյանը չպատասխանեց:

— Մի՞թե կարծում եք, որ դաշնակից զորքերը պիտի պարպեն Պոլիսը, — պնդեցի ես:

— Մանկամտություն կըլլար անոնց վրա հուսալը: Անոնք հոս եկեր են ճաշելու: Կուտեն, կիսմեն, տանուտերերը կկողոպտեն ու կշտանալն վերջը կըսեն, «Յադե, բավ է, երթանք»: Ու կերթան:

— Այն ատե՞ն:

— Այն ատեն հիմար ոչխարները նորեն կման խելոք գայլերու մագիլներուն մեջ:

Օտյանը նորեն հառաչեց ու գլուխը թեթեց իր նիհար կրծքին: Չնայելով նրա կիսակատակ խոսակցությանը, այդ պահին նա ինձ թվաց մարմնացած վիշտ: Ապագայում մի քիչ ավելի ծանոթանալով, նկատեցի, որ այժմ կատակը նրա համար դարձել է ավելի քան արվեստ, մի տեսակ հակաթույն իր սրտի մորմոքը մի քիչ մեղմացնելու համար: Արդարև, ծաղրելին ծաղրելով ու ծիծաղեցնելով, նա ինքը չգիտեր ծիծաղել, գոնե ես ոչ մի անգամ չտեսա նրան լսելի ձայնով ծիծաղելիս:

Ինձ հայտնի էր, որ Երվանդ Օտյանն էլ մյուս հայ մտավորականների հետ ձերբակալվել էր ու արքայազն անապատի խորքերը: Ձերբակալման մասին տարիներ անցած ինձ պատմեց նկարիչ Փանոս Թեռլեմեզյանը, որ իմ ժամանակ Կ. Պոլսումն էր: Այդ դեպքումն էլ արտահայտվել էր Օտյանի ինքնուրույն բարոյականի նկարագիրը: Երբ սկսվում է հալածանքը հայերի դեմ, Օտյանը թաքնվում է մի շատ ապահով տեղ: Նա մտում է այնտեղ մի ամբողջ ամիս և զարմանում է, որ ինքը

չի ձերբակալվել: «Ինչո՞ւ, մտածում է նա, մի՞թե ես դավաճան եմ իմ ազգի և բարեկամների դեմ»: Մի օր նա դուրս է գալիս թաքստից և զբոսնում է Բերայում: Նույն օրն ևեթ նա ձերբակալվում է:

Իհարկե ինձ համար հետաքրքրական էր գիտենալ նաև, թե ինչպես է նա մահից ազատվել: Բայց որովհետև նա ինքը չէր խոսում այդ մասին և հետո էլ չխոսեց մինչև վերջը, ես բարձր համարեցի չբերել նրա տակավին չսպիացած վերքերը:

Ապագայում նրա ազատման հանգամանքներն ինձ պատմեցին ուրիշները: Դժբախտաբար, ես կորցրել եմ իմ հուշատետրը, ուստի չեմ կարող ճշտությամբ արձանագրել իմ լսածները, բացի մեկից, որ մնացել է վառ իմ հոգևած հիշողության մեջ: Դեպքի պատմությունը լսել եմ Իզմիրում՝ մի երիտասարդից: Նրա անունն էս չեմ հիշում, բայց համոզված եմ, որ նա մի օր կվավերացնի իմ ասելիքը, եթե, իհարկե, ներկա տողերը կարդալու առիթ ունենա:

Ահա մոտավորապես ի՞նչ էր պատմում այդ երիտասարդը:

«Ես անապատումն էի, ծառայում էի գերմանացի սպաներին շոֆերի պաշտոնով: Որովհետև բավական ազատ խոսում էի գերմաներեն, ինձ համար շատ էլ դժվար չէր թուրքերից թաքցնել հայ լինելս, թեև արտաքինս գերմանական ոչինչ ունի և գերման սպաներն էլ շատ լավ գիտեին, թե ով եմ ես:

Մի առավոտ նստած էի մի թրքական սրճարանի տեռասի վրա և սուրճ էի խմում, սպասելով իմ իշխանավորներին: Նրանք սրճարանի ներսումն էին մի քանի թուրք սպաների հետ: Խոնավ եղանակ էր, ոչ այնքան ցուրտ, բայց թեթևակի անձրևում էր: Տեռասի վրա բացի ինձնից ոչ ոք չկար: Հանկարծ ուշադրությունս գրավեց վերին աստիճանի աղբատիկ հագնված մի մարդ: Չնայելով, որ անապատը լեցուն էր թափառաշրջիկ մուրացկաններով և զանազան տիպերի մարոդորներով, այդ մեկն ինձ թվաց մի քիչ տարատեսք: Նա դանդաղ, անվստահ քայլերով, գրեթե ուժասպառ մոտենում էր սրճարանին, միշտ գլուխը վար թեքած և հենվելով ձեռնափայտին:

Տեռասին չհասած՝ նա նստեց ոչ հեռու ընկած մի մեծ քարի վրա: Մարդը, ըստ երևույթին, շատ էր հոգևած կամ ծայր աստիճան անոթի էր և կամ թե մեկն ու թե մյուսը: Նա ծանր հառաչեց, գլուխն ավելի թեքեց կրծքին և քանի մի րոպե մնաց այդ դրության մեջ անշարժ: Կարելի էր կարծել, որ նա մեռավ: Ես հեռվից դիտում էի նրա ողորմելի արտաքինը, ակամա մտածելով, որ այդ խեղճության տակ թաքնված է մի ուրիշ բան: Նրա ուսերի ոսկորները ցնցոտիների տակից դուրս էին ցցվել, ինչպես տաշեղները տոպրակի տակից: Ես հիշեցի Վիկտոր Հյուգոյի Ժան Վալժանի այն րոպեները, երբ բազմաչարչար հերոսն իր ծայրագույն տառապանքների, անոթության և հալածանքի մեջ էր:

Մարդը մի վայրկյան գլուխը բարձրացրեց, նայեց իմ կողմ երկչոտ հայացքով: Գուցե նա եկել էր սրճարան մտնելու, մի բան ուսելու կամ խմելու համար և չէր համարձակվում: Տեսա նրա դեմքի գծերը, բնորոշ քիթը, կապտագույն աչքերը սև հոնքերի տակից: Տեսա և ճանաչեցի, հակառակ նրա երկայն ու ավելիառը մորուքին: Երվանդ Օտյանն էր, իմ նախկին ուսուցիչը, մեր ամենից սիրված ու հարգված երգիծաբանը: Նա, որ շատ անգամ էր կշտամբել ինձ ծուլությանս համար: Այո, վստահ էի, որ նա է, ուրիշ ոչ ոք և ո՞վ կարող էր ունենալ այդ գեղեցիկ, մելամաղձոտ և մարդուս հոգին թափանցող աչքերը: Բայց և այնպես կամեցա ստուգել, արդյոք չե՞մ սխալվում: Երևակայել անգամ չէր կարելի, թե Երվանդ Օտյանը կարող է այդ վայրերն ընկնել:

Մի վայրկյան խորհեցի առանց վարանելու, դիմել նրան ու հարցնել, բայց զգացի, որ այդ վտանգավոր է. կարող էի սխալված լինել և իմ գաղտնիքը վտանգի ենթարկել, չէ որ կյանքում հնարավոր են այդպիսի նմանություններ երկու տարբեր մարդերի մեջ: Ոտքի ելա և ծանր քայլերով անցա նրա մոտով իբրև թե միանգամայն անուշադիր դեպի մարդը և նայելով մի ուրիշ կողմ, ցածր ձայնով արտասանեցի «Երվանդ Օտյան»: Նա ուշադրություն չդարձրեց, միշտ գլուխը կրծքին թեքած: Ես ավելի բարձր ձայնով կրկնեցի «Երվանդ Օտյան»:

Նա լսեց, նա ցնցվեց, նայեց վարից վեր վախեցած և նորեն գլուխը թեթեց կրծքին, ձեռով մի բացասական շարժում անելով: Այն ժամանակ ես վճռեցի վերջին միջոցին դիմել — արտասանել իմ անունն ու ազգանունը: Ես նրա աշակերտների մեջ ամենաաղմկարարն էի, ես միշտ նրա ուշադրության ու կշտամբանքների առարկան էի: Նա չէր կարող չմտաբերել իմ անունը, պետք է ճանաչեր ինձ: Եվ ճանաչեց: Անմիջապես նրա նիհար, մթազևած երեսը լուսավորվեց անսպասելի ուրախության ժպիտով, նման գիշերվա խավարին, որ հանկարծ լուսավորվում է կայծակով: Ահ, երբեք, երբեք չեմ մոռանալ այդ սթանչելի վայրկյանը: Ես արդեն հուզվել էի:

Այո, ասացի, ես եմ, քո նախկին աշակերտը, իմ ուսուցիչ: Հիշո՞ւմ եք, թե ինչպես մի անգամ երդվեցիք ծեծել ինձ և չծեծեցիք:

Հենվելով իր ձեռնափայտին, նա ոտքի ելավ ու լուռ մի քայլ մոտեցավ ինձ: Այդ րոպեին ես պատրաստ էի հարձակվել նրա վրա, փաթաթվել նրա ոսկրացած պարանոցին ինչպես մի որբ, որ երկար կարոտությունից հետո հանկարծ գտել էր իր կորած հորը: Ըստ երևույթին նույն պահանջն զգաց և նա: Բայց այդ անկարելի էր, երկյուղը օտար աչքերից միաժամանակ կաշկանդեց երկուսիս էլ: Մի քանի վայրկյան մնացինք անշարժ դեմուդեմ կանգնած:

— Ո՞րտեղից եք գալիս, — վերջապես համարձակվեցի արտասանել ես:

Օտյանը ձեռքը տարածեց դեպի անապատի խորքը:

— Որտե՞ղ էիք գնում:

— Չգիտեմ, — պատասխանեց նա թույլ ձայնով:

Ես ձեռիս շարժումով ցույց տվեցի իմ օթոմոբիլը, որ կանգնած էր մի քանի քայլ հեռու: Թևից բռնելով, բարձրացրի նրան և նստեցրի քովս: Ես նրան տարա մեր գարաժը, հանձնեցի իմ գերման ընկերներից երկուսին, որոնց հավատարմությանն ու ազնվությանը վստահ էի:

Չորս օր կերակրեցի նրան, ամեն կերպ աշխատելով քիչ թե շատ վերականգնել նրա սպառված ուժերը: Հագուստը չփոխեցի, բարվոք համարելով թողնել նրան մուրացկանի ցնցոտիների մեջ:

Հինգերորդ օրը իմ հավատարիմ ընկերների խորհրդով ու ցուցմունքով ես տարա նրան հեռու, մի ավելի ապահով տեղ, ուր նրա կյանքին վտանգ չէր սպառնում: Շուտով վրա հասավ արմիստիսը...»:

Եթե այս պատմությունը լսած լինեի Կ. Պոլսում, անշուշտ նրա իսկությունը կստուգեի Օտյանից: Բայց ես չեմ կարծում, որ պատմողը հնարած լինի այդ ողբերգությունը: Համենայն դեպս, Էականն այն է, որ երգի ու ծիծաղի համար ծնված մեծագույն հայ երգիծաբանը կրել է կյանքի ամենադժնդակ օրեր: Այդ եղեռնալի օրերի անջնջելի դրոշմն էր, որ կրում էր իր վաղաթառամ դեմքի, ծոված ողնաշարի, իր խորն ընկած կրծքի և իր հոգևած ձայնի վրա...

Ես նրան հանդիպում էի գրեթե ամեն օր, մեծ մասամբ երեկոները: Նա գալիս էր նախ Թոբաթյանի ճաշարանը մի բաժակ թրթրական սուրճ խմելու, բարձրանում էր իմ սենյակը և այնտեղից գնում էինք Թոբաթիի ճաշարանը կամ ճաշում էինք հյուրանոցի սեղանատանը:

Ես միայն առաջին անգամ Օտյանին արթուն տեսա, մնացած օրերը միշտ գիկնովցած էր: Ես դիտմամբ գործածեցի «գիկնովցած» բառը: Դա մեկն է թրթրահայ ոճի նրբություններից: Հարբել բառը ես համարում եմ գռեհիկ՝ գոնե Երվանդ Օտյանի նկատմամբ: Գիկնովության և հարբեցման մեջ կա մի անջրպետ, այս մեկը չպիտի մոռանալ: Երվանդ Օտյանը խմում էր և շատ էր խմում, այն էլ գլխավորապես օղի — դուզիկո կամ մասթիկա — բայց երբեք, երբեք չէր հարբում այն իմաստով, որով մենք գործ ենք ածում այդ վուլգար բառը: Երբեք ես նրան չտեսա քայլելու ժամանակ աջ ու ձախ երերվելիս, երբեք բանականությունը մթազևած, երբեք լեզուն կարկամած, երբեք իր եվրոպական ձևերի, կիրթ շարժումների դեմ մեղանչելիս:

Ասում են այնպիսի մարդկային գեշ բնագոյների արթնեցուցիչ խթանն է, այդ ճիշտ է, բայց ինչո՞ւ չավելացնել, որ նա, միևնույն ժամանակ, և բարի ու գեղեցիկ բնագոյների խթանն է: Եականը կախված է անհատի բնածին առանձնահատկություններից ու կրթությունից: Օտյանի ներսում լավը գերակշռում էր վատից, գեղեցիկը տգեղից, բարին չարից: Կրթությամբ կատարյալ եվրոպացի, նա գիտեր իր մեջ սանձահարել այն, ինչ որ կարող էր գրգռել դիմացինի նողկանքը կամ ատելությունը: Նրա հոգեկան հարստություններն էին բարությունը, մարդասիրությունը և սերը դեպի գեղեցիկը: Նա արտիստ էր ոչ միայն Էպիկուրյան իմաստով, այլև հոգեկան բարձր ու աննյութական պահանջներով: Նա օղու բաժակների մեջ խեղդում էր միայն բացասականը, ավելի զորեղ արտահայտելու համար դրականը: Նա այդ անում էր ոչ գիտակցաբար, ոչ ի ցույց մարդկանց, այլ այնպես, բնագոյաբար: Նա ինքն էլ չգիտեր ինչու է խմում, գիտեր միայն, որ խմելը ավելի է գեղեցկացնում կյանքը կամ գոնե ավելի է թեթևացնում նրա լուծը: Դա նրա հավատո հանգանակն էր...

Մի բան ինձ շատ էր հետաքրքրում — ե՞րբ է նա աշխատում: Այս հարցը ես ինձ թույլ տվեցի նրան տալու միայն այն ժամանակ, երբ արդեն բավականաչափ բարեկամացել էինք և կարող էինք իրարու երեսին ասել շատ դառնություններ:

Նա, իհարկե, հասկացավ իմ հարցի հետին իմաստը: Նա մի տեսակ ներողամտաբար ժպտաց և պատասխանեց.

— Օղին ինձ տալիս է գաղափարներ, բայց աշխատությանս թափը չի ավելացնում:

— Օրվա ո՞ր ժամերին եք գրում:

— Նայելով, թե ինչ եմ գրում: Լրագրների համար գրում եմ մեծ մասամբ խմբագրատների մեջ, տանը գրում եմ ինձ համար, երբ գլուխս թարմ է քնից կամ հանգստությունից հետո:

— Ո՞ր աշխատանքն է ձեզ համար ավելի դուրեկան տա՞ն, թե՞ խմբագրատան:

— Լրագրական աշխատանքը ես համարում եմ ներկարարություն, տան աշխատանքը — նկարչություն: Հարկավ, նկարելն ավելի հաճելի է, քան ներկելը, բայց և թյուր անգամ դժվար:

Կ. Պոլսում եղածս ժամանակ Օտյանը գրում էր երեք թե չորս օրաթերթերում: Բացի գրելուց, նա զբաղվում էր և թարգմանություններով, իհարկե, լրագիրների և ոչ իր հաճույքի համար: Նա ուներ արդեն մի շարք խոշոր թարգմանություններ ֆրանսիական գրականությունից, նաև ռուսականից, Դոստոևսկուց և Տոլստոյից գլխավորապես: Ռուսականը նա թարգմանել էր ֆրանսերենից, բնական է նույն անփութությամբ և աղաղակիչ աղավաղումներով, որոնք հատուկ են առհասարակ բոլոր ֆրանսիական թարգմանություններին:

Օտյանն իր «օրգանն» էլ ուներ: Մի իբրև թե պատկերազարդ երգիծական՝ «Իգնատ աղա» անունով: Մի նիհար վատառողջ շաբաթաթերթ, որ սակայն ազգային խեղկատակների, կեղծ մարգարեների, ինքնակոչ դիպլոմատների, անխիղճ վաշխառուների և մանավանդ գրական շառլատանների ահն ու սարսափն էր: Ինձ թվում էր, թե մի քանի խմբագիրներ գնել էին նրա աշխատակցությունը և «ամիկոշոնություն» կապել նրա հետ, որպեսզի ապահովեն իրենց նրա թունավոր սլաքներից: Բայց նա ոչ ոքի չէր ինսայում և ոչ ոք էլ չէր հանդգնում նրա դեմ ելնել իր կոտրած վահանով: Նրա գաղտնի ու հայտնի հակառակորդները շատ-շատ կարողանում էին իրարու մեջ մրթմրթալ.

— Երվանդ Օտյանը արբշիռ մըն էր:

Այսբանը և ոչ ավելի: Ուրիշ ի՞նչ կարող էին ասել այդ բարոյապես անապական և մտավորապես բյուր անգամ իրենցից բարձր մարդու մասին:

Իմ ներկայությամբ Երվանդ Օտյանը միայն մի անգամ դավաճանեց իր բնածին նրբագագուկությանը և իր ընտանեկան քնքուշ կրթությանը և այդ մի անգամս էլ հակառակի պես ինձ ձգեց անախորժ դրության մեջ:

Ահա եղելությունը. —

Պոլսահայ կանանց լիզան ինձ առաջարկել էր ի նպաստ ընկերության մի բանախոսություն անել: Իմ սովորության համեմատ ես բանախոսությունից հրաժարվել էի, կրկնելով իմ մշտական խոսքը — «բնությունը ձեռիս մեջ գրիչ դնելով, լեզուս խլել է»: Բայց լիզայի նախագահուհու համառ թախանձանքից հարկադրված խոստացել էի հրապարակորեն կարդալ իմ նոր պիեսներից մեկը, եթե չեմ սխալվում, «Արմենուհի»-ն:

Մի օր ինձ մոտ եկավ այդ տիկինը և հայտնեց, թե ընթերցանության օրը որոշված է, սրահը վարձված է, տոմսակներն արդեն ցրվում են, և խնդրեց, որ խոստումս չմոռանամ: Ես չգիտեի, որ այդ կինը բանաստեղծուհի է (պոլսահայ կանանց երեքից մեկը բանաստեղծուհի է) և ունի մի շարք ոտանավորներ, ուր երգվում են վարդը, սոխակը, առավոտյան արշալույսն իր վառ գույներով, երեկոյան թախիծը և այլ նման նոր բաներ:

Տիկինը զանազան ծուռումուռ ուղիներով բանն այնտեղ հասցրեց, որ վերջապես վայրկյան որսաց խոսելու բնության և կյանքի գեղեցկության մասին: Վերջը նա իր քսակից դուրս բերեց տասնհինգ տարեկան մի աղջկա լուսանկար: Տիկինը ինքը հիսունուվեց տարեկան էր: Նա լուսանկարը պահելով աչքերիս առջև, հարցրեց.

— Նայեցեք, կճանչնա՞ք, թե ոչ:

Նայեցի լուսանկարին, նայեցի տիկնոջն ու ասացի:

— Այդ դուք ինքներդ եք, տիկին:

— Այո, — գոչեց բանաստեղծուհին ուրախանալով, — ես եմ: Պատերազմեն առաջ եմ նկարվել:

Նույն օրը երեկոյան այս անմեղ դիպվածը միամտորեն պատմեցի Երվանդ Օտյանին, անզգուշաբար հիշելով պատկառելի տիկնոջ անունը:

Երվանդը ոչինչ չասաց, բայց նենգամտաբար ժպտաց:

Երկու օր հետո լույս տեսավ «Իզնատ աղա»-ի հերթական համարը, և ահա ինչ եմ կարդում նրա մեջ.

«Հիսունվեց տարեկան հայուհի մը, որ գրականության հետ առնչություն կը սեպե ունենալ, երեկ ներկայացավ մեր հյուր Շ-ին, և, ցույց տալով իր օրհորդ ժամանակին լուսանկարը՝ ըսավ. պատերազմեն առաջ նկարված եմ: Շ.-ն նայեց լուսանկարին ու տիկնոջ երեսին ու ըսավ «անշուշտ Ղրիմեն պատերազմեն առաջ»: Կրնա՞ք երևակայել տիկնոջ կացությունը»:

Այո, Երվանդ Օտյան, կրնա՞ք այժմ երևակայել իմ կացությունը: Նույն օրը երեկոյան ես լրջորեն վշտացած դառը խոսքերով հանդիմանեցի բարեկամիս իր անզգուշության համար:

— Աղեկ, մոռացե՛ք, դուք չեք ճանչնար ատ տիկնոջը, — ասաց նա զարմանալի հանգստությամբ, որպես թե իր արածը մի անմեղ կատակ էր:

Ես վճռեցի այլևս չերևալ տիկնոջ աչքին: Ես ամաչում էի Երվանդի իմ բերանը դրած խոսքերից. «Անշուշտ Ղրիմի պատերազմեն առաջ»: Լիզայի վարչության անդամուհիներից մեկի միջոցով հայտնեցի, թե ընթերցանությունից հրաժարվում եմ:

— Պատճառը, — հարցրեց անդամուհին:

— Չեմ կարող ասել:

— Յակացա, — ծիծաղեց տիկինը, — կամչևաք մեր նախագահեն, չեք ցանկանար հանդիպել: Չպիտի ըսեիք, բայց քանի որ ըսեր եք, ի՞նչ մեծ ոճիր է: Կատակ է, կմոռցվի:

— Բայց ես չեմ ասել, տիկին, Օտյանն է ավելացրել:

Կը հավատամ: Օտյան անոր հակառակորդն է, առջի անգամը չէ, որ կխաճեն: Չպիտի մտահոգվեք: Ես ամենքին կըսեմ, որ լուսանկար ցուցնողն ես եմ եղեր: Չպիտի հրաժարվեք ընթերցանությունեն: Լիզան սրահի վարձը վճարած է, տոմսակներն ամբողջովին սպառված են, լրագիրներ հայտարարել են: Չըլլար...

Դրությունս անտանելի էր, ի՞նչ անեի:

Խնդիրը լուծեց ինքը բանաստեղծուհին, Օտյանի զոհը: Յետևյալ օրը կեսօրին, երբ դրսից հյուրանոց եկա, դռնանմանը հայտնեց, թե սալոնում ինձ մի տիկին է սպասում:

Բանաստեղծուհին էր՝ ձեռքում մի գեղեցիկ փուկ:

— Օրիորդ Մարգարտին համար եմ բերեր, — ասաց նա, իմ շփոթված բարևն ընդունելով սովորական ժպիտով:

Ընթերցանությունս կայացավ:

Առհասարակ Երվանդ Օտյանը ծայրահեղ էր թե՛ ատելության և թե՛ սիրո մեջ: Գուրգուրելու և խայթելու միջին ճանապարհը նրա համար գոյություն չուներ: Ահա ինչ ասաց նա մի անգամ...

«Օր մը ես գացի Պթի-շան տեսնելու մեր մեծահամբավ դերասանուհի X-ի խաղը: Տեսա, շատ հավնեցա, շատ ծափահարեցի, անգամ ձեռքն ալ համբուրեցի: Տուն գալով, լրագրի մը համար գրեցի քննադատություն մը, խաղը գովաբանեցի, ըսելով դերասանուհի X... հայ թատրոնի աստղն է»: Կարծեցի, որ տիկինը գրածես շատ գոհ պիտի ըլլա ու ինձմե ալ շնորհակալ: Սակայն հետևյալ օրն անորմե նամակ մը առի, ուր նա իր վրդովմունքը կհայտնեի իմ որակման դեմ: Կոժգոհեի, որ ես իրեն «աստղ» եմ անվաներ, չէ թե «արեգակ»: Ատիկա ինձ զայրացուց, ու ես իրեն պատասխանեցի. «Տիկին, ներողամիտ եղեք, սխալվել եմ, կզղջամ, դուք աստղ չեք, այլ համաստեղ, «արջ» համաստեղը»:

Ես չեմ տեսել մի հայ գրող, որի հետ այնքան հաճելի և ուսանելի լիներ գրականության մասին խոսելն ու վիճաբանելը, որքան Երվանդ Օտյանի հետ: Գեղարվեստական գրականության վերաբերմամբ նրա պաշարն անսպառ էր:

Առանձնապես ուսումնասիրել էր ֆրանսիական վիպասանությունն ու պոեզիան: Ռեալիզմի մասին գուցե ոչ մի արևմտահայ գրող կամ քնարերգակ չուներ նրա չափ ճշգրիտ գաղափար: Յայ գրականության մասին շատ չէր խոսում կամ խոսում էր առանց ոգևորության: Երբ ես հիշում էի ժամանակակից կենդանի արևմտահայ գրողներից կամ քնարերգակներից մեկի կամ մյուսի անունը, նա ձեռով մի արհամարհական շարժում էր անում ու երեսը մի կողմ դարձնում:

Մի երկու անգամ միայն արտահայտվեց խոսքերով: Միտս են նրա սուր դարձվածքներից մի քանիսը: Ահա նրանք.

— Երկրեն անջատվելով կջանան երկինք սավառնել, բայց ամենքին ալ թւերը կզարնվին ծառի ճյուղերուն ու կջարդվին: Կարեկցութեան արժանի խեղճեր են, չեն կրնար պահել իրենց սահմանափակ մտքի հավասարակշռությունը: Տասնյակ Ալֆրեդ դը Մյուսեններ ու Բողլերներ ունենք, որոնք կրնային երջանիկ կաֆեճիներ կամ կակաոնիներ ըլլալ, փոխանակ մուսաներն անարգելու: Մեկեն ավելի խենթեր կճանչնամ, որոնք նախ հանգեր կհորինեն, ապա տողեր կգրեն: Կըսեն, թէ մարդու խելքը միայն ծերութեան կգտնէ իր բույնը: Ատոնց խելքը ծերութեան տարիքին ալ կսավառնէ օդին մեջ:

Նույն լեզվով նա չէր խոսում մահացյալների մասին: Պեշիկթաշյան, Դուրյան, Վարուժան, Մեծարենց մի-մի սիրելի անուններ էին նրա համար...

Կանանց մասին Երվանդ Օտյանը խոսում էր մերթ հեգնանքով, մերթ մի տեսակ թաքնված մելամաղձությամբ և երբեք ոգևորված: Երբեմն սինիկ էր Գամառ-Քաթիպայի չափ, բայց միշտ սրամիտ: Մեծ մարդկանց և մեծ գրողների կյանքից պատմում էր մեկը մյուսից ավելի անսթող անեկդոտներ: Նրա հումորը անսպառ էր, ձայնը միշտ անփոփոխ, ծիծաղը միշտ անձայն:

Ես մինչ վերջ չգիտցա, արդյոք, երբևիցե նա լրջորեն սիրե՞լ է մի կին և այժմ ունե՞ր որևէ հարատև կապ մեկի հետ: Նա կանանց հետևից չէր վազում վավաշոտ կապկի պես, ինչպես շատ-շատերն են իր հայրենակիցներից: Իսկ իրեն փնտրողներ, երևի, կային:

Երվանդ Օտյանը մի առանձին ատելություն ուներ դեպի այն կանայք, որոնք հորջորջվում էին որպես «ազգային կամ հասարակական գործիչներ»: Այնուամենայնիվ, այդ կանայք հանգստություն չէին տալիս նրան: Մի օր ես Իշխանաց կղզիներից մեկումն էի մենակ և հիանում էի Մարմարյան ծովի տեսարանով, հանկարծ հեռվից լսեցի իմ անունը: Երվանդ Օտյանն էր: Նա վազում էր դեպի ինձ, ձեռները գլխից վեր բարձրացրած, նման փախչող սագի թւերին: Երկու երիտասարդ կիներ, բարձրաձայն քրքջալով վազում էին նրա հետևից, ջանալով նրան բռնել:

— Չեմ կրնար, չեմ կրնար, — աղաղակում էր Օտյանը ինչպես երկու տարեկան մանուկ, որին մայրն ուզում էր լողարան մտցնել:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի ես, ծիծաղելով, վասնզի իրավ որ տեսարանը ծիծաղելի էր:

Պարզվեց, որ այդ կանայք «գործիչներ են», ուզում են խեղճ Օտյանին զոռով տանել մի ինչ-որ հարստի մոտ «ազգային պետքերի» համար դրամ մուրալու:

Ես նրան ազատեցի իր հալածողների ձեռքից, հավատացնելով նրանց, թե մենք ժամադրված ենք իսկույն ևեթ Կ. Պոլիս վերադառնալու:

Մի ուրիշ անգամ Օտյանը, պարպելով դուզիկոյի չգիտեմ քանիերորդ բաժակը, հարցրեց.

— Տիկին X եկա՞՞ծ է ձեզի...

— Ո՞վ է այդ տիկին X..., չեմ ճանաչում:

— Շտե կճանչնաք, տիպար մըն է: Կարիք չկա զինքը փնտրելու, օր մը ինքը կուգա ձեզի ծանոթանալու: Բայց զգույշ, չըլլա թե որսվիք, պիտի գըջաք:

— Չեմ հասկանում ի՞նչ եք ուզում ասել:

— Մտիկ ըրեք, ըսեմ, յուրաքանչյուր կին ուռկան մը ունի այդ մարդիկ որսալու համար, մեկուն գործիքը գեղեցկությունն է, մեկ ուրիշինը՝ խոսքը կամ երաժշտությունը, կեղծ համեստությունը և դահա-դահա ուրիշ բաներ: Տիկին X...-ն գեղեցիկներեն չէ, քիչ մըն ալ fannee (թառամած), բայց ան

ալ իր ուռկանն ունի — իր բանաստեղծությունները, որոնցով իր որսը կընե կամ կկարծե թե կընե: Չգաստ, դուք ալ կրնաք որսվիլ: Մի խնդաք, ցույց տալով ձեր ճերմակ գլուխը: Մազերուն գույնը ու տարիքը տիկին X... — ին համար արժեք չունին: Անիկա ուրիշ կին է, անիկա անուն կփնտրե, համբավավոր անուն, մանավանդ եթե անունն հեռվեն եկեր է: Կուգա ձեզի կկարդա իրեն ոտանավորները, ինքը կհուզվի, կուլա անգամ, մեյ մալ տեսար աչքերը մետաքսե թաշկինակով մաքրեց, կրթոտ աչքերով նայեց ձեր աչքերուն ու ըսավ. «Տեա՞ր, մենք երկուքս ալ միևնույն կաշվեն շինված անոթներ ենք: Մենք մուսաներում զոհերն ենք, պիտի զիրար լավ հասկանանք, պիտի իրար հոգին ըմբռնենք և...»

— Բավական է, Օտյան, բավական է, — ընդհատեցի ես նրա անսովոր պերճախոսությունը: — Ես սկսել եմ պոլսահայ կնոջ մասին լավ գաղափար կազմել, զուր մի ջանաք ինձ հիասթափեցնել...

— Կազմեցեք, ջանըմ, կազմեցեք, ես բան մը չըսի...

Երվանդ Օտյանն առանձնապես անգուրթ էր հայ կուսակցությունների վերաբերմամբ:

Սկզբումնա զգույշ էր խոսում, վերապահությամբ, կարծես, առայժմ ինձ ուսումնասիրելով, որ գիտնա, թե ես ինչ եմ մտածում: Սուտով համոզվելով, որ ես էլ իր նման անկուսակցական մեկն եմ, փոքր առ փոքր ազատություն տվեց իր լեզվին: Խոսում էր նա միշտ հանդարտ, անվրդով: Նա չէր քննադատում, չէր վերլուծում այս կամ այն կուսակցության գործունեությունը և այնպես արտահայտվում: Պարզ էր, որ այդ վերլուծումը նա վաղուց էր կատարել ինքն իր մտքում, իր հոգու մեջ, որ այլևս կարիք չէր զգում նորեն անհանգստացնելու իր գլուխը: Խոսում էր նա հատ-հատ դարձվածներով, արտասանելով այսօր մեկը, վաղը մյուսը, սակայն կապակցաբար և առանց մեկը մյուսին հակասելու:

— Ի՞նչ կարծիքի եք հնչակյան կուսակցության մասին, — հարցրի ես:

— Ձգեք, ջանըմ, ձգեք, — գոչեց Օտյանը, ձեռով մի արհամարհական շարժում անելով: — Ի՞նչ է հնչակյան: Դաշնակցության հարազատ եղբայրը, նույն արմատն ելած, նույն որովայնն ծնած: Անոնց կռիվը դաշնակցության հետ հացի խնդիր է. կջանան իրենք ալ գդալ մը ունենալ կաթնապուրին մեջ: Կիսաբեն, ըսելով, թե պայթարը գաղափարական է: Անոնք իրարու մեջ ալ կկռվին ու կբզկտվին, ալ հին հնչակյան, ալ վերակազմյալ, ալ սոցիալ-դեմոկրատ, բոլորն ալ սուտ, բոլորն ալ հացի խնդիր, քիչ մըն ալ ազգին մոռացությունն ազատվելու փափագ: Սապահ գուլյան կճանչնա՞ք, — հարցրեց նա հանկարծ:

— Ոչ,

— Կըսեք, որ Ամերիկա երթալու եք, կհանդիպիք, ուսումնասիրեցեք զինքը տիպար մըն է: Իսկ Թախտաճյան տեսա՞ք: Հոս է, ձեր հյուրանոցին մեջ: Ան ալ ուրիշ տիպար է: Դեսպան է դաշնակցական Հայաստանի կողմեն: Խեղճ ու անլեզու մեկն է, սակայն դրամ պահանջելու մեջ ոչ ոք կրնա մրցել անոր հետ:

— Ումի՞ց է դրամ պահանջում:

— Ունեցողներն ու չունեցողներն, բացի ինձմե: «Տրվեք, կըսե, Հայաստան փարայի պետք ունի: Պետություն մըն է, անկախ պետություն, զորք կկերակրե, դպրոցներ կբանա, համալսարան մըն ալ, թատրոն, թանգարան, ալ ինչ — չգիտեմ...»:

— Բայց պոլսահայերն ունի՞ն դրամ:

— Քչեն-շատեն, սնդուկին հատակը: Իբրանոսյան մը ունինք, անիկա կրնա գումար մը տալ, անոր օձիքն այժմ դաշնակցականներուն ձեռքերուն մեջ է:

— Ո՞վ է այդ Իբրանոսյանը:

Մեծահարուստ վաճառական մը, բամբակի առևտուր կրնէ: Պատերազմի ատեն ինքը զինքը աղա
Իբրանոս հռչակեց, թրքություն ընդունելով: Ի՞նչ ըներ, կամեցավ իր գույքն ու կյանքը կորստեն
ազատել: Արմիստիսեն վերջը նորեն հայացավ: Ատանկ հայեր ալ ունինք: Հիմար չեն, կրնան
պղտոր ջուրին մեջ ձուկ որսալ:

— Երվանդ, դուք խոսեցիք դաշնակցականների ու հնչակյանների մասին, իսկ ռամկավարները, չէ
որ մի այդպիսի կուսակցություն էլ կա:

— Ատիկա կուսակցություն չէ, այլ փրկություն հոգույն իմո, սնդուկի:

— Չեմ հասկանում:

— Պարզ է լույսին պես: Աղաներ են, միացել են՝ իրենց գրպանները դաշնակցական ու հնչակյան
արշավներեն պաշտպանելու ու անոնց քնթին ծիծաղելու համար: Անոնք խելոք են, չեն ուզեր
ազգին անունով ֆարա տալ, ուստի միացեր են ու զիրենք քաղաքական կուսացկություն
հայտարարել, ըսելով՝ «Տեսեք, մենք ալ գաղափարականներ ենք, թողեք մեզի հանգիստ»: Անոնք
ալ ունին պարբերականներ հոս ու հոն, որոնք կպաշտպանեն անոնց գրպանները: Տեսակ մը
զամբոբեր են տերերուն դռներու առջև: Ամսական կստանան, կապրեն, աջ ու ձախ ոռնալով ու
խածնելով:

Եգիպտոս կհանդիպեք, Ամերիկա ալ: Իգնատ աղան կըսե, անոնց որովայնին մի զարներ, լեցուն է,
կճայթե ու գեշ հոտ կտարածե...

Երվանդ Օտյանը ջերմ թատերասեր էր: Նա միշտ գալիս էր իմ պիեսների ներկայացումներին և
երբեմն մնում էր մինչև վերջը: Հետո մենք գնում էինք Թոթաթի կամ մի ուրիշ ճաշարան ընթրելու:

Իմ օթյակից ես շարունակ նայում էի Օտյանին: Նրա թախծալի դեմքը հեռվից էլ ինձ մի
անիմանալի հաճույք էր պատճառում: Կան այդպիսի եզական դեմքեր: Պիեսի յուրաքանչյուր
արարվածից հետո նա արագ ոտքի էր ելնում և ուժգին ծափահարում էր, գլխի շարժումներով աջ
ու ձախ հանդիսականներին հրավիրելով նույնն անել: Նա դերասաններին վերաբերվում էր
հայրական ինամբով, միշտ խրախուսելով և երբեմն միայն խայթելով՝ առանց չարության:

Երվանդ Օտյանն ինքն էլ արտիստ էր բառիս ոչ սահմանափակ իմաստով:

Արտիստ էր որպես գրող, որպես մտածող ու գործող, արտիստ իր ճաշակով, իր
նրբազգացությամբ, իր կրթությամբ: Բոհեմյան էր, բայց առանց վյուզերության, բարեկամ
առանց ակնկալության, ընկեր՝ առանց շահախնդրության:

Երվանդ Օտյանը մարդ էր: